

ՄԻՆՉ ԱՅՍՕՐ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԻՐ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԻՆ ԿՐ ՔԵՆԱՐԿԻ ԵԼԵԿՏՐՈՎԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՊՊՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՐՑԸ

ԳՈՐԾԱԴՈՒԼԸ ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Ելեկտրականության հաստատությունների ապագե-տականացման գործընթացին դեմ իբրև բողոք, հաս-տատությունների պաշտոնէությունները սենտիքան շարունա-կեց գործադուլը եւ յայտնեց, որ պիտի շարունակե նաեւ այսօր:

«Խորհրդարանին մէջ այսօր օրէնսդրական նիս-տի ընթացքին, երբ կը քննարկուի յիշեալ թղթածրա-րը, գործադուլը պիտի շարունակուի. իսկ եթէ պա-տահի, որ խորհրդարանը, առանց նկատի առնելու սենտիքային առաջարկած բարենորոգումները եւ պահանջները՝ վաւերացնէ այդ թղթածրարը, գործա-դուլը կազմակերպողները պիտի դիմեն մագլցողական քայլերու, ինչպէս՝ ամբողջ Լիբանանը մթնոլթեան մատնելը», ըսաւ սենտիքայի նախագահ Էմիլ Ժրէա, մամուլի ասուլիսի մը ընթացքին:

Միւս կողմէ, Պէնտագոնի քննարկումները գործադու-լը նկատեցին ապօրինի եւ զգուշացուցին սենտիքան՝ մագլցողական քայլերու դիմելէ եւ գործադուլը շա-րունակելէ:

ՆԱԽԱՐԱՐ ՊԱՅՏՈՒՆ ԶԱՅՆԸ ԿՐ ԲԱՐՁՐԱՑՆԵ

Միւս կողմէ, ուժանիւթի եւ ջուրի հարցերու նա-Շարք՝ էջ 9

ԱԿՆԱՐԿ

ՀԱՒԱՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԻ ՆՈՐԱԳՈՅՆ ԴՐՍԵՒՈՐՈՒՄԸ

11 Օգոստոսին արցախահայութիւնը անգամ մը եւս ուղղունցաւ քուէատուի՝ ընտրելու համար իր նախագահը: Անմի-ջադէպ մթնոլորտի մէջ, ամենայն թափան-ցիկութեամբ եւ արդարութեամբ տեղի ու-նեցած ընտրութիւններու արդիւնքին հի-մամբ Հ.Յ. Դաշնակցութեան Արցախի կապ-մակերպութեան զօրակցութիւնը վայելող Արկաղի Ղուկասեան վերընտրուեցաւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետու-թեան նախագահ:

Եւ իւրաքանչիւր անգամ որ ժողովըր-դավարական կարգերու դաս կը տրուի արցախահայութեան կողմէ, Ազրպէյճան ջղագրգիռ հակապոզիցիոններ կ'ունեն-նայ՝ աշխարհին ու պետութիւններուն ինքզինք ներկայացնելով իբրեւ կոտոր-ւած ապգ, գրաւուած տարածք, գաղթա-կանեալ իրավիճակի մէջ ապրող բնակչու-թիւն եւ «յարձակողապաշտ» հայերուն զոհ գացած ժողովուրդ:

Եւրոպական Միութիւնը Միւսաքի սկզբունքներէն ետ դարձ կը կատարէ, երբ անվար կը նկատէ Լեռնային Ղարա-բաղի Հանրապետութեան տարածքին տե-ղի ունեցած ընտրութիւնները, երբ կ'ան-գիտանայ խնդրոյ առարկայ շրջանի պատկանելիութիւնը եւ կը զօրակցի Ազր-պէյճանի հողային ամբողջականութեան: Եւրոպական Միութեան յայտարարութիւն-ներուն համահունչ էլ լոյսնորով հանդէս կու գայ նաեւ Ռուսիան, որ հակամարտու-թեան ծալքերուն եւ տարբեր ոլորտներուն ամէնէն ծանօթ պետութիւնը կը թուի ըլ-լալ:

Արցախի ապատամարտին, անկախու-թեան հռչակագիրին, Ազգային Ժողովի ընտրութիւններուն եւ Արցախի Միմա-նադրութեան որդեգրումին նման ինքնու-րոշման իրաւունքի գործընթացին հաւա-քական նորագոյն դրսեւորումն է Լեռնա-յին Ղարաբաղի Հանրապետութեան նա-խագահական ընտրութիւնը: Եւ բնական է, որ Ազրպէյճան նախընտրէ առանց նա-խագահի, առանց պետական կառոյցներու անիշխանական մթնոլորտի մէջ «ղեկա-վարուող» Ղարաբաղ մը, որ տեսակէտ իսկ չ'ունենար հակամարտութեան կարգաւոր-ման բանակցութիւններուն:

Բայց Արցախեան ապատամարտի ոգին համոզած է միջազգային ընտանիքը, թէ արցախահայութիւնը ամէն գնով ինքնու-րոշուած է արդէն աւելի քան տասնամեակ մը առաջ, եւ ի գին մեծ վտանգներու իրագործուած ապատարուումները կը պահպանուին պետականութեամբ, բանա-կով, համապատասխան կառոյցներով ու հանրապետութեան նախագահով:

«Ա.»

ԼՂՀԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐԿԱԳԻ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ՄԱՍԼՈՅ ՍԱՌԼԻՍԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲՈԼՈՐ ԴԵՏԵՐԸ ԿՐ ԸԱՍՏԱՏԵՆ ԼՂՀԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԸԵԶԱՍԱՐ ԸՆԹԱՅԸ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան վե-րընտրուած նախագահ Արկաղի Ղուկասեան երէկ յետմիջօրէին տուաւ մամուլի ասուլիս մը: Ներկայացնելով ընտ-րուելու ընթացքը, նախագահը ըսաւ.

«Դեռ երէկ չճանչ-ցուած երկիրը պէտք է կայացնէր այդպիսի բաց, թափանցիկ եւ կազմա-կերպուած ընտրութիւն-ներ, ցոյց տալու համար իբրեւ իարժեք պետութեան իր կարելիութիւնները: Երկրի գլխաւոր խնդիրը կը մնայ միջազգային ճանա-չում ստանալու հարցը»:

Ընտրութիւններուն իր ստացած վստահու-թեան բարձր քուէին (88 առ հարիւր) մասին խօսե-լով, նախագահը ըսաւ, որ այդ մէկը նախկին տարի-ներուն իր վարած յաջող քաղաքականութեան ար-դիւնքն է: Անոր խօսքե-րով, «այս համալսարան-ը, որ վերջին երեք տա-րիներին ընթացքով երկ-րից արտագաղթի ժամա-նակ երկրում մնալը պար-տադրուած էր, հիմա որե-ւէ պարտադրանք չկայ: Այսօր խնդր է դրուած ստեղծել պայմաններ լի-արժէք կեանքի համար»:

Ընտրութիւններուն եւ Ազրպէյճանի հողային ամբողջականութիւնը ճանչնալու հետ կապ-ւած Ռուսիոյ յայտա-րարութեան մասին Ար-կաղի Ղուկասեան ըսաւ. «Այդ կատարուած է Ազր-պէյճանի ճնշումներին ներքոյ եւ դրա վրայ ու-շադրութիւն դարձնել պէտք չէ: Իսկ Ազրպէյճա-նին ենթակայ ըլլալը Ֆան-թաթիք տարբերակի է, որը կարող է միանշանակ յանգեցնել պատերազմի»:

Արկաղի Ղուկասեան եզրափակեց իր խօսքը ըսելով. «Կասկած չու-նեմ, որ ինչպէս 91ին, այդպէս էլ այս ընտրու-թիւնները յետոյ դրանց անօրինականութեան մասին յայտարարութիւն անողները պաշտօնապէս չ'նորհաւորելու են ինձ»:

«Լեռնային Ղարաբա-ղի Հանրապետութեան ղեկավարին ընտրու-թիւնները կայացան ժո-ղովրդավարութեան հի-ման վրայ, միջազգային իրաւունքի չափանիշե-րու եւ Լեռնային Ղարա-բաղի Հանրապետու-թեան սահմանադրու-թեան ամբողջովին հա-մապատասխան»:

Այս յայտարարութիւնը կատարեց Լեռնային Ղա-րաբաղի Հանրապետու-թեան նախագահական ընտրութիւններու Ռուս-իոյ ղեկավար ղեկավար, Ազգային Անվա-րտանցութեան Միջազգա-յին Ակադեմիայի անդամ Վալերի Սիֆեւտար մամուլի ասուլիսի մը ընթացքին:

«Օգոստոս 11ին Լեռ-նային Ղարաբաղի Հան-րապետութեան մէջ կա-րգած նախագահական ընտրութիւնները ազատ էին ու թափանցիկ», յայ-տարարեց Միացեալ Նա-

ՇՆՈՐՀԱՒՈՐԱԳԻՐ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոս Սեծի Տանն Կիլիկիոյ, Երկուշաբթի, 12 Օգոստոս 2002ին հետեւեալ շնորհաւորական գիրը ուղ-ղեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Ս. Վ. Արկաղի Ղուկասեանին, անոր վերընտրութեան բարեբաւտիկ առիթով:

12 Օգոստոս, 2002
Անթիլիաս

Կսեմաշուք

Տիար Արկաղի Ղուկասեան

Նախագահ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան

Ստեփանակերտ

Սիրելի՛ պրն. նախագահ,

Ուրախութեամբ իմացաւք ձեր վերընտ-րութիւնը որպէս նախագահ Լեռնային Ղա-րաբաղի Հանրապետութեան:

Արդարեւ, անցնող հինգ տարիներու ըն-թացքին դուք պանապան նախաձեռնութիւն-ներու ձամբով ձեր գերագոյն կարելիին ի գործ դրիք առաւել էւս հպօրացնելու Ղարա-բաղը, ամրապնդելու անոր անկախութիւնը եւ բարելաւելու անոր տնտեսական կեանքը: Ուստի, ձեր վերընտրութիւնը պերճախօս վկայութիւն մըն է Ղարաբաղի ժողովուրդին կողմէ ձեր անմին նկատմամբ տածած սի-րոյն ու վստահութեան եւ ունեցած ակնկա-լութիւններուն:

Այս առիթով անմապէս եւ յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կը շնոր-հաւորեմք ձեզ, եւ կը վերահաստատեմք ձեր ամբողջական զօրակցութիւնը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ անոր արդար իրաւունքներուն: Թող ձեր յառաջի-կայի բոլոր ծրագիրները իրականանան Աս-տուծոյ օրհնութեան ներքեւ:

Հայրապետական օրհնութեամբ եւ սիրոյ ջերմ ողջունիլ,

Աղօթարար՝
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Հանդներու ղեկավար ընտրութիւնները կազ-մակերպուած են Քոստ-վոյի եւ Պոսնիոյ մէջ

կան Յանձնաժողովին ու միջազգային ղեկավար ընտրութիւններէ քանի

ընդգծեց, որ Ղարաբաղի ընտրութիւնները կազ-մակերպուած են Քոստ-վոյի եւ Պոսնիոյ մէջ

ԵԱՀԿի կազմակերպած ընտրութիւններէ քանի

Երէկ Հ.Յ.Դ. Լիբանանի Կեդրոնական Կոմիտէն հետեւեալ շնորհաւորագիրը յղեց ԼՂՀի նախագահ Արկաղի Ղուկասեանին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ՝ Արկաղի Ղուկասեանին,

Յարգելի՛ պարոն նախագահ Կը շնորհաւորեմք ձեզ Լեռնային Ղա-րաբաղի Հանրապետութեան նախագահ վերընտրութեան առիթով:

Համոզուած ենք, որ ժողովրդավար կարգերու առաւել հաստատման այս օրի-նակով ձեւ ձեր նախագահութեան օրով աւելի էւս կ'ամրապնդուին Արցախեան ապատամարտով կերտուած անկախու-թիւնն ու կայացած պետականութիւնը:

Յաջողութեան ջերմ մաղթանքներով՝
Հ.Յ.Դ. ԼԻԲԱՆԱՆԻ
ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

յայտնեցին, որ ընտրու-թիւններու ընթացքին ոչ մէկ միջազգայն արձա-նագրուած է եւ թէ ատոնք յաւաքոյն ձեռով կազմակերպուած էին:

Իբրեւ ղեկ Արցախ գտնուող Բրիտանիոյ մարդկային իրաւանց Հէսինքեան խմբակի ան-ջամներէն մէկը, որ մաս-նակցած է 85 տարբեր ընտրութիւններու,

մը անգամ աւելի յաւ-
●ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱԳ-ՆԵՐՈՒ ղեկավար խմբա-կի ղեկավարը՝ ձէյմս Ռոպրթ Հաստատեց, որ ընտրութիւնները եղած են ազատ եւ թափանցիկ եւ թէ Լեռնային Ղարա-բաղի Հանրապետու-թիւնը ցոյց տուած է մեծ յառաջընթաց ժողովրդա-վարութեան հաստատ-ման գործընթացին մէջ:

ԲԶԻՉԱՅԻՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆՑ

ՊԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ ԽՕՍՔԵՐԸ ԱՆՀԻՄՆ ԵՆ

Կ'ԸՍԵ ՆԱԽԱՐԱՐ ԲԵՐՏԱՀԻ

Հաղորդակցութեան միջոցներու նախարար Ժան Լուի Քրրտահի երէկ յայտ-նեց, որ բջիջային հեռաձայնի հաստատութիւններու մարզին պետականացման մասին որեւէ խօսք անկաւար է, անպատասխանատու եւ անհիմն:

Մամլոյ ասուլիսի մը ընթացքին Քրրտահի վերահաստատեց 1 Օգոստոսին կա-ռավարութեան կողմէ բջիջային հարցի լուծման առնչութեամբ տրուած որոշումը եւ ընդգծեց, որ կառավարութիւնը ամենայն շարժումները կը հսկէ երկրին, պե-տութեան եւ ժողովուրդին շահերուն, յատկապէս՝ վարչապետ Ռաֆիք Հարիրի:

Քրրտահի կոչ ուղղեց առարկայական մօտեցում ցուցաբերել նշեալ հարցին, շեշտելով, որ կառավարութիւնը ճիշդ չի խնայէր բջիջային հեռաձայնի մարզը բարգաւաճումի առաջնորդելու եւ պայն հաստատ ու կայուն հիմքերու վրայ պե-տեղելու իմաստով:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ

ՈՒՂԵՐԶ՝ Ա.ՂՈՒԿԱՍԵԱՆԻՆ

Գարեգին Բ. Ամենայն Հայոց կաթողիկոսը Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանութեան անունով շնորհաւորական հետեւեալ նամակը յղած է Արկաղի Ղուկասեանին.

«Լ.Ղ. Հանրապետութեան նախագահի ընտրութեամբ Արցախի հերոսական ժողովուրդը վերստին հաստատեց ապառ ապրե-լու իր կամքը եւ իր պատասխանութիւնը՝ ընթանալու Արցախի պետականութեան զօ-րացման, երկրի կայունութեան ամրապնդ-ման եւ բարգաւաճման ճանապարհով:

«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լուսոյ խո-րանից աղօթք ենք բարձրացնում՝ առ Աստ-ւած, որ Իր հանապազ օրհնութեան ներքոյ խաղաղ ու ապահով պահպանի հայոց Ար-ցախի աշխարհը եւ աջակից ու առաջնորդ լի-նի ձեզ նախագահի բարձր ու պատասխա-նատու պաշտօնում՝ յանուն հաստատու մեր ժողովրդի հայրենաշինական իղձերի իրա-կանացման: Թող Տէրը պարգեւի ձեզ քաջա-ողջութիւն. ուժ, կորով ու եռանդ»:

ՆԱԽԱԳԱՀ ԶՈՋԱՐԵԱՆԻ ՈՒՂԵՐԶԸ՝

ԱՐԿԱԳԻ ՂՈՒԿԱՍԵԱՆԻՆ

Հայաստանի նախագահ Ռաֆիք Զոյարեան շնորհաւորական հետեւեալ ուղերձը յղած է Արկաղի Ղուկասեանին նախագահ վերընտ-րութեան առիթով.

«Ի սրտէ շնորհաւորում եմ ձեզ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագա-հի պաշտօնում վերընտրուելու կապակցու-թեամբ:

«Ձեր վերընտրութիւնը Արցախի ժողովր-դի կամքի ապա դրսեւորումն է, ապատու-թեան, անկախութեան եւ ժողովրդավարու-թեան ուղիով վճռականօրէն քայլելու նրա պատմական ընտրութեան հաստատումը: Վստահ եմ, որ ձեր երկրորդ պաշտօնավա-րութիւնը կը նպաստի Լեռնային Ղարաբա-ղի հպօրացմանն ու բարգաւաճմանը՝ ի շահ Արցախի, Հայաստանի եւ համայն հայու-թեան:

«Մաղթում եմ ձեզ քաջաողջութիւն եւ յա-ջողութիւն ձեր պատասխանատու գործու-նեութեան մէջ, իսկ Արցախի ժողովրդին՝ խա-ղաղ երկինք, առաջընթաց եւ բարօրութիւն»:

ՊԱՆԵՍՏԻՆԵԻՍՐԱՅԷԼԵԱՆ

ԲԱՆՈՒՄՆԵՐԸ

ԿՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ ԱՆԸՆԴՄԷՋ

Իսրայէլացի գիտնորներ պաղեստինցի մը սպան-նեցին Այսրոյորդանանի մէջ. թափ տալով բախում-ներուն, որոնք կը սպառնան ամերիկեան խաղաղա-րար ճիգերուն:

Իսրայէլեան ուժերը Ղասալ Իսրահաթը սպաննե-ցին Եամուն գիւղին դէմ յարձակումի մը ընթացքին. յայտնեցին Իսրահաթի ընտանիքն ու իսրայէլեան բանակը, որուն մէջ բանբերը քսաւ, որ գիտնորները Իսրահաթը սպաննեցին, երբ ան կը փորձէր փա-խուստ տալ բնակարանէն: Չհնուորները Եամուն մտած էին ձերբակալելու համար Իսրահաթը, որ «Արսալի Նահատակներու Փաղեստին»-ում անդամ է: Իսրահաթի ընտանիքի անդամները սակայն կ'ըսեն, թէ անկողիններուն մէջ քնացած էին. երբ գիտնորները դուռը խորտակելով մտած ու սպան-նած են Ղասալը՝ զայն ձերբակալելէ ետք:

Սեպտեմբեր 2000ին ծայր տուած պաղեստինեան երկրորդ ինքնիշխան ցարդ խլած է 1498 պաղես-տինցի եւ 587 իսրայէլացի զոհեր:

Միւս կողմէ, իսրայէլացի բարձրաստիճան պաշ-տօնատար մը յայտնեց, որ ազդեցիկ ուժ չ'է այլեւս

ՏՕՆ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ Ս. ԱՍՏՈՒՎՃԱԾՆԻ ԵՒ «ՈՒՒՏԻ ՕՐ» ՊԻՔՖԱՅԱՅԻ

Տարիներու անադուլեան համաձայն, այս տարի եւս հանդիսաւոր շուքով պիտի նշուի Սուրբ Աստուածածնի վերափոխման տօնը եւ պիտի կատարուի Պիքֆայայի մատրան ուխտագնացութիւնը:

Այս առիթով մեր ուխտաւոր հաւատացեալներուն կը ներկայացնենք Ուխտի Օրուան կապուած հետեւեալ ժամանակացոյցը:

ՈՒՐԱԾ. 16 ՕԳՈՍՏՈՍ 2002

● Աղի օրհնութիւն եւ ոչխարներու զենում, առաւօտեան ժամը 10:00ին:

● Երեկոյեան ժամերգութիւն, կէսօրէ ետք ժամը 5:00ին:

● Նկարներու օժտում, ժամը 5:30ին:

● Այցելութիւն վեհափառ հայրապետին եւ Աջահամբողջ լուրջ հաւատացեալներուն համար, երեկոյեան ժամը 8:00-9:00:

● Գեղարուեստական յայտագիր վանքի շրջափակին մէջ, իրիկուան ժամը 9:00ին: Երոյթ կ'ուսնենան Սոնիկ Փամպուլեան եւ Մանուկ Մինասեան:

● Շարական եւ հոգեւոր խորհրդածութիւն եկեղեցւոյ մէջ, իրիկուան ժամը 11:00-12:00:

ՇԱՐԱԾ. 17 ՕԳՈՍՏՈՍ

● Գիշերային ժամերգութիւն, առաւօտեան ժամը 8:00ին:

● Առաւօտեան ժամերգութիւն, առաւօտեան ժամը 10:00ին:

● Ճաշու ժամերգութիւն, կէսօրուան ժամը 12:00ին:

● Երեկոյեան ժամերգութիւն, կէսօրէ ետք ժամը 4:00ին:

● Գիշերային ժամերգութիւն, երեկոյեան ժամը 6:00ին:

● Սուրբ եւ անմահ պատարագ, երեկոյեան ժամը 7:30ին, եկեղեցւոյ շրջափակին մէջ:

Պիտի պատարագ եւ պիտի քարոզէ՝

ԳԵՐՇ. Տ. ԳԵՂԱՄ ԵՊՍ. ԽԱՉԵՐԵԱՆ (Առաջնորդ Լիբանանի Հայոց թեմի)

Արարողութեանց պիտի նախագահէ եւ ժողովորդին իր պատգամը պիտի փոխանցէ՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՍԵՏԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Յաւարտ Սուրբ եւ անմահ պատարագի տեղի պիտի ունենայ խաղողի եւ մատաղի օրհնութիւն, հանդիսապետութեամբ վեհափառ հայրապետին:

Պատարագին երգեցողութիւնը պիտի կատարէ «Շնորհալի» երգչախումբը, ղեկավարութեամբ՝ **ՇՈՒՐԱՅԻՆ Ս. ՄԵՐՈՒԿ Կ. ՎՐԻ. ԲԱՆԻՔԵԱՆԻ**

ԿԵՐԱԿԻ. 18 ՕԳՈՍՏՈՍԻՆ

● Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ պիտի պատարագէ եւ պիտի քարոզէ՝

ԳԵՐՇ. ՏԻՐԱՅՐ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ

Արարողութեանց պիտի նախագահէ՝

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Յաւարտ Սուրբ եւ անմահ պատարագի, տեղի պիտի ունենայ խաղողօրհնէքի արարողութիւն:

ԵՐԱՅՈՒՆԵՐԻ. «ՄԵՆԵԼՈՅ ՕՐ» 19 ՕԳՈՍՏՈՍ

● Տեղի պիտի ունենայ Ս. պատարագ եւ հոգեհանգստեան պաշտօն Ս. Աստուածածնայ մատրան մէջ:

Բոլոր այն հաւատացեալները, որոնք կը փափաքին մատաղցու ոչխար (արու), խաղող եւ կամ մատաղազին նուիրել, թող բարեհաճին ներկայանալ Կաթողիկոսարան, Անթիլիաս կամ Պիքֆայայ, ամէն օր առաւօտեան ժամը 8:30ին երեկոյեան ժամը 5:00, եւ իրենց նուէրները յանձնել **ՀՈԳՇ. Տ. ՍԻՓԱՆ ՎՐԻ. ՔԷՃԷՃԵԱՆԻ** կամ **ՀՈԳՇ. Տ. ՄԱԿԱՐ ԱԲՂ. ԱՇԳԱՐԵԱՆԻ**, Անթիլիաս, եւ **ՀՈԳՇ. Տ. ՅՈՒՍԵՒ ՎՐԻ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ**, Պիքֆայայ: Բոլոր մատաղցու ոչխարները պէտք է Պիքֆայայ հասած ըլլան առաւելագոյնը մինչեւ Ուրբաթ, 16 Օգոստոս, առաւօտեան ժամը 9:00:

Կոչ կ'ողողենք հաւատացեալ մեր ժողովուրդին, Ս. Աստուածածնայ տօնին առիթով ուխտի գալու Պիքֆայայ Ս. Աստուածածին եկեղեցին եւ վերանորոգելու իր քրիստոնէական հաւատքը:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ՄԱՀԱԶԴ

Տիկին Այտա Թաշեան եւ դուստրերը՝ Լուսինէ, Ռոզալին եւ Դանիա

Տիկին Լուսին Թաշեան

Տէր եւ տիկին Յակոբ Վեղիբեան

Տէր եւ տիկին Գրիգոր Սեմէրեան եւ զաւակունք

Տիկին Էլիզ Թաշեան

Տէր եւ տիկին Յակոբ Թաշեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Վարդգէս Պոյաճեան եւ զաւակունք

Տիկին Լիզա Վեղիբեան եւ զաւակունք

Տէր եւ տիկին Բաֆֆի եւ Սիւրբ Սեմէրեան եւ զաւակունք

Խանճեան ընտանիք
Պիթար ընտանիք
եւ համայն ազգականներ կը գովեն իրենց ամուսնոյն, հօր, զաւակին, փեսային, նշորք եւ հարազատին՝

ՍՈՎՐԱՏ ԿԱՐԱՊԵՏ ԹԱՇԵԱՆԻ (ՇՆԵԱՆ՝ ՊԵՂՈՒՅ, 1945ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 10 Օգոստոս 2002ին, Ռիատ, Սէուտական Արաբիա, ինքնաշարժի արկածի հետեւեալով:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:

● Յուղարկուողութեան, քաղման եւ նաեւ ցաւակցութեան մանրամասնութիւնները՝ հետագային:

ՊԵՐՐԻԻ ՀԵՏ ՏԵՍԱԿՅՈՒԹԵԱՆ ԸՆԹԱՅՔԻՆ

ՆԱԽԱՐԱՐ ՄԻՆԻՈՐԱ ԿԸ ՎԱՏԱՆԵՅՆԵ, ԹԵ ԲԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՐՆԱՆ ԳԱՆՁԵԼ ԻՐԵՆՑ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ

Խորհրդարանի նախագահ Նեպի Պրորի երէկ ընդունեց ելուստի նախարար Ֆուատ Սինիորան, երեսփոխան Հասան Խալիլի ներկայութեամբ: Քննարկուեցաւ քաղաքապետարաններուն տրամադրուելիք գումարներուն հարցը:

Նախարար Սինիորա վստահեցուց, որ բոլոր քաղաքապետարանները կրնան դիմել Կեդրոնական Դրամատան՝ գանձելու համար իրենց գումարները, բացի Պրնթ ժպէլի քաղաքապետարանէն, որուն հաշիւը դրամատան պիտի փոխանցուի 20 Օգոստոսին:

Անդրադառնալով քաղաքապետարաններուն վճարուելիք 2001ի գումարներուն, Սինիորա Պրորիի վստահեցուց, որ նախարարութեան հետ քաղաքապետութեանց

քննարկումները պիտի շարունակուին եւ աշխատանքը աւարտուելէ ետք Լիբանանի տարածքին գտնուող իւրաքանչիւր քաղաքապետարանի պիտի ստանայ 150 միլիարդ լ. ոսկի:

Հարաւի եւ յատկապէս պատագրուած շրջաններու քաղաքապետարաններուն վճարուելիք գումարներուն համար Սինիորա ընդգծեց, որ այդ վճարումները պիտի կատարուին մինչեւ 2002ի աւարտը: Ներկայները մաղթեցին, որ այս տարի հարաւի մէջ բարգաւաճման աշխատանքները կ'ընթացան պէտք եղած ձեւով եւ նիւթական յատկացումները կ'ըլլան Հարաւի Խորհուրդին, որպէսզի շարունակէ վերաշինութեան աշխատանքը:

ՆԱԽԱՐԱՐ ՄԸՐՀԷԺ ԵՒ ԲԱԶՄԱԹԻԻ ԱՆՁՆԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԵՍԱԿՅԵՑԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՉՕՐ. ԷՄԻԼ ԼԱՀՈՒՏԻ ՀԵՏ

Նախագահ ՉՕՐ. Էմիլ Լահուտ երէկ Պատարագի մէջ ընդունեց բազմաթիւ անձնաւորութիւններ, որոնց հետ քննարկեց երկիրը յուզող զանազան հարցեր:

Նախագահ Լահուտի այցելեց նախկին փոխվարչապետ, երեսփոխան Միշէլ Մըր: Քննարկուեցան տեղական եւ շրջանային վերջին իրադարձութիւնները եւ անոնց նկատմամբ որոշեցուած տարրեր կեցուածքները:

Նախագահական պալատ այցելեց գաղթականներու հարցերու նախարար Մարուան Համատէ, որ նախագահ Լահուտի ներկայացուց նախարարութեան պատասխան աշխատանքի ծրագիրը: Հանդիպումին քննարկուեցան տեղական եւ շրջանային հարցեր:

Փոխ նախագահ: Մըրհէժ Նկատել տուաւ, որ նախագահ Լահուտի հետ քննարկած է ընդհանուր հարցեր եւ շեշտեց, որ այս շրջանին անհրաժեշտ է ազգային գիտակցութեան ամփոփումը՝ դիմադրելու համար բոլոր այն վտանգներուն կամ ճնշումներուն, որոնք կրնան ծագել պաղեստինցի ժողովուրդին վրայի գործ դրուող վայրագութիւններուն իբրեւ հետեւանք:

Մըրհէժ շեշտեց, որ հարկ է ընդհանուր հաստատութիւններն ու կառավարական վարչակարգ մերը արհեստավարժ դարձնել, որպէսզի անոնք հասնին պետական միջազգային հասարակարգին:

Յաւաքային 18, 19 եւ 20 Հոկտեմբերին Լիբանանի մէջ տեղի ունենալիք Ֆրանսախօս երկիրներու վեհաժողովին առիթով նախագահ Լահուտ երէկ գլխաւորեց ժողովը, որուն ներկայ էին Մարուան Նաեմ, մշակութեան նախարար Ղասսաբ Դասաբ, Սալամէ եւ տարրեր նախարարութիւններու ընդհանուր տնօրէններ:

Ժողովին, նախարար Սալամէ ներկայացուց Ֆրանսախօս երկիրներու

վեհաժողովը հիւրընկալելու իմաստով կատարուած պատրաստութիւնները եւ վեհաժողովին ծրագիրը:

Նախագահ Լահուտ իր կարգին դրուատեց վեհաժողովին համար կատարուած նախապատրաստական աշխատանքները: Ան նկատել տուաւ, որ Ֆրանսախօս կարգ մը երկիրներու նախագահներուն հետ պիտի կապուի՝ արծարծելու համար հարցեր, որոնք կը կարօտին աշխատանքի:

Նախագահ Լահուտ ընդունեց Պատալէք Ջըրմէլ երեսփոխաններու մէկ պատուիրակութիւնը, որոնց շարքին Նազի Ջապիթէր, Ասէմ Գանսո, Ամմար Մուսաուի, Իպրահիմ Պատան, Հիւսէյն Հաթ Հասան, Մուհամէտ Եադի, Մարուան Ֆարէս, Մասուուտ Հուսէյրի եւ Նատէր Սուքքար:

Հանդիպումին քննարկուեցան շրջանային կարիքները եւ Պեքայի մէջ բարգաւաճման ծրագիրներու գործադրութեան կարեւորութիւնը, յատկապէս Ասի դեմոսի համար ջրամբար մը կառուցելու անհրաժեշտութիւնը:

Նախագահ Լահուտ յայտնեց, որ անձամբ կը հետապնդէ այդ ջրամբարին եւ բարգաւաճման ծրագիրներու աշխատանքները:

ԿՈՒՉՈՒԻ

● Հայկական խմբի խառնատիպերու մը կարիքն ունի երիտասարդ փորձառու ցրուիչ - վաճառողի մը, որ ունենայ նաեւ ինքնաշարժ վարելու (ուսումն) արտօնագիր: Դիմել՝ հեռ. 03 - 626177 թիւին:

ԿՈՒՉՈՒԻ

● Ոսկերչական մոմի վրայ աշխատող փորձառու օրհորդ մը: Դիմել՝ հեռ. 03-375724:

ԿԸ ՓՆՏՈՒՄ

● Որոշեցուած ընտանիքի մը աղջիկն էմ, ծնած 11 Մայիս 1970, CMC հիւանդանոցը: Կը փնտռեն ծնողքս եւ ինձէ մեծ ջոյրերս եւ ըզբայաներս (Պուրճ Համուտէն): Հեռ. 01 - 258308, երեկոյեան ժամը 8:00էն 10:00:

ԿՈՒՉՈՒԻ

● «Էր - քոնսիսիոնի» մեծ հաստատութիւն մը կարիք ունի վարպետ «թեքնիկներ» ու (նորոգող եւ անցնող), լաւ պայմաններով: Դիմել՝ հեռ. 03-800601 եւ 01-378801:

ՄԱՀԱԶԴ

Գարակեօգեան Հաստատութեան տնօրէնութիւնը, անձնակազմը եւ Լիբանանի Տեղական Յանձնաժողովը կը գովեն իրենց վստակաւոր եւ երկար տարիներու տնօրէնիցի

ՆՈՒՊԱՐ ԴԱԻԹԵԱՆԻ (ՇՆԵԱՆ՝ ՊՈՒԽԱ, 1900ԻՆ)

մահը, որ պատահեցաւ Հինգշաբթի, 8 Օգոստոս 2002ին, Փարիզ:

Յուղարկուողութեան արարողութիւնը պիտի կատարուի երեքշաբթի, 13 Օգոստոս, կէսօրէ առաջ ժամը 10:30ին, Փարիզի Հայ Առաքելական եկեղեցւոյ մէջ, ժամ Կուժն:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահազգ:

ՏԵՍԱԿԵՏ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲՂԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ՆԱԵՒ ԳԻՏԱԿԻՑ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐՈՒ ՆԿԱՏԱՍՐ

Բոլոր ըսի - ըսաները, շրջանային թէ միջազգային, ինկան ջորը՝ շնորհիւ Լեռնային Ղարաբաղի հայութեան միասնականութեան, սեփական հողին կառչած ըլլալու անխորտակելի կամքին եւ համազգային հիմնահարցերու նկատմամբ գիտակցութեան: Նախագահական ընտրութիւններուն ջախջախիչ մեծամասնութեամբ ժողովրդային մասնակցութիւնը տարբեր բացատրութիւն չունի: Արցախահայութիւնը այս կամ այն թեկնածուին քրեւարկելէ առաջ, նախ քուէարկեց իր տրֆաքթօ հանրապետութիւնը ըլլալու իրողութեան, իր թշնամիներուն թէ միջազգային ընտանիքին միասնամընդմիջտ յուշելով, որ հակառակ բոլոր հոսանքներուն ու պատենչներուն, Լեռնային Ղարաբաղի հայութիւնը իր պայտենական հողերուն վրայ արդէն կերտած է լրիւ անկախ հանրապետութիւն եւ իր ազգընտիր վարչակարգով աշխարհին կը ներկայանայ ամբողջովին ժողովրդավար դիմագիծով, ինչպէս նաեւ վճռած է արժանապատի կեանք ապրելու իր իրաւունքը ամէն գնով, նոյնիսկ արեան գնով տանուլ չտալ:

Արեւմտեան պետութեանց բազմաթիւ դէտեր եւ լրագրողներ, նոյնիսկ քաղաքական անձնաւորութիւններ հաստատեցին ընտրութեանց ժողովրդավար, թափանցիկ եւ ամէն իմաստով արդար ըլլալու իրողութիւնը, երբեմն նոյնիսկ քաղաքական ընկերակազմ վուգահեռներ գծելով քաղաքակրթութեան երկիրներու ընտրական հողովոյթին հետ. տուեալ մը, որ ոչ միայն պատի կը բերէ հայութեան, այլեւ լաւագոյնս կ'ապացուցէ, թէ Լեռնային Ղարաբաղը կապով ու պատրաստ է մուտք գործելու եւ դասուելու միջազգային մեծ ընտանիքին իբրեւ լիիրաւ մէկ անդամ:

Կը մնայ, որ արցախահայութիւնը առաջին հերթին, ապա նաեւ Հայաստանի իշխանութիւններն ու աշխարհացրի հայութիւնը միասնաբար լծուին յաւելալ աշխատանքի՝ Լեռնային Ղարաբաղի ընկերային - տնտեսական անհրաժեշտ մարկը բարելաւելու, պայն օրէ - օր քիչ մը աւելի բարգաւաճու աւրդի պետութիւն դարձնելու վճռականութեամբ:

Որովհետեւ Արցախի հայութիւնը իր այս յախուռն ու գիտակից քայլով ոչ միայն իր իրաւունքը կը պաշտպանէ եւ իր իսկ ձեռքով կը սահմանէ իր ճակատագիրը, այլեւ մեծ գիտակցութիւն կը ցուցաբերէ համազգային մեր հիմնահարցերու նկատմամբ, քաջ գիտնալով, որ Լեռնային Ղարաբաղի անկախ դիմագիծի պահպանումը նաեւ հիմնաքար կը հանդիսանայ ամբողջական Հայաստանի կերտումին: Այլ խօսքով, արցախահայութիւնը իր այս օրինակելի եւ խոր յարգանք պարտադրող քայլով ներազգային առումով պատգամ մը կ'ողողէ բոլորիս, ամբողջ հայութեան, թէ միեւնոյն վճռականութեամբ ու միեւնոյն հաւատքով կարելի է ապստոյնել նաեւ Հայ Դատի պահանջատիրական մեր անդառնալի երթին հանգրուանն առ հանգրուան լուծումը, մինչեւ հողահաւաքի արքայան մեր գործընթացի յաղթական պակուրը՝ Ապատ, Անկախ եւ Միացեալ Հայաստանի կերտումը:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

FRIGO SERVICES
HAROUTUNE BEUYUKJIAN EST.
AIR CONDITIONING & ELECTRICAL CONTRACTORS
32 YEARS OF EXPERIENCE
LOCAL & ABROAD

Highly mounted split system air conditioners
Floor/Ceiling split system air conditioners
In-ceiling split system air conditioners
Duct type split system air conditioners

LG, Daikin, Gree, ACSON, GENERAL NATIONAL, GOODMAN, BUILDING AUTOMATICS, SILEVO

BOURJ HAMOUD, NAHR STREET, SIN EL FIL ROAD NEAR SOCIETE GENERALE BANK

TEL/FAX: 01/259923 - 03/344256
WORKSHOP: 03/632434
e-mail: seta47@hotmail.com

Khabbaz-Orient Plus
Travel & Tourism

Varna

Starting from 350\$
Including R/T ticket, 8 days bungalow, transfers, guides, Visa & taxes not included
3 Cyprus 3 days 185 \$
Bout Trip to Cyprus & Greece 380 \$
01-900598, 901598 - 03-258336, 256254
www.orientplus.com

«ՄՈՎԱՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ» ՇՔԱՆՇԱՆ՝ ՄՈՎԱՍԵՍ ԽՈՐԵՆԱՑՈՒ ԹԱՐԳՄԱՆԶԻՆ

Օրերս Հայկաի Հայաստանի գլխավոր հիւպատոսությունում տեղի ունեցավ ընդունելություն, որը վերածուեց հայ-սիրիական բարեկամության խնամարարության: Օրումս հերոսը արաբ մանկավարժ էր Թարգմանիչ Նիկար Սալիլիին էր, որին Հայաստանի նախագահ Ռոպերթ Քոչարեանի հրամանագրով վերջերս շնորհուել է «Մովսես Խորենացու» շքանշան՝ ի գնահատում նրա գրական գործունեության:

Շքանշանի յանձնման արարողությունը մասնակցելու էին եկել Հայկաի տեղական իշխանությունների ներկայացուցիչներ, հայ համայնքի հոգեւոր առաջնորդներ, մշակութային, բարեսիրական, կրթական միությունների և հաստատությունների ներկայացուցիչներ, Հայկաիում հաստատված արաբներ երկրների գլխավոր և պատուոյ հիւպատոսներ, հայ և արաբ հասարակական գործիչներ, լրագրողներ: Նիկար Սալիլիին շնորհարարեցին Սիրիայի Արաբական Հանրապետությունում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Լեւոն Սարգսեանը և Հայկաիում Հայաստանի գլխավոր հիւպատոս Արմէն Մելքոնեանը: Դեսպան Լեւոն Սարգսեանը Հայաստանի նախագահի անունից Նիկար Սալիլիին յանձնելով բարձր պարգև, արժեւորեց նրա երկար տարիների պատկանելի վաստակը հայ-արաբական գրական-մշակութային կապերի պարզացման մէջ և մաղթեց նորանոր յաջողություններ: Նա յատկապէս ընդգծեց Նիկար Սալիլիի՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմութեան» և Գրիգոր Նարեկացու «Մատենադրերգութեան» աշխատությունների արաբերէն թարգմանությունների կարեւորությունը:

Յուրիչ էր Հայաստանի նախագահին, ինչպէս նաեւ բոլոր ներկայներին ուղղուած Նիկար Սալիլիի երախտիքի խօսքը, որը հնչեց հայերէն և արաբերէն լեզուներով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
Գեամակոս ԳԵՍՊԱՆՈՒԹԻՆ

Ս. ՅԱՐՈՒԹԻՆ ԵԿԵՂԵՅԻ - ԺՈՒՆԻԷ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ժունիէի Ս. Յարութին եկեղեցւոյ Թաղական խորհուրդը կու գայ յայտարարելու Չալբայի, Անթիլիասի և շրջակայից իր ծխական հաստատացեալ ժողովուրդին, թէ Շաբաթ, 17 Օգոստոս 2002ին Ուխտի Օրն է Պիքֆայայի Ս. Աստուածածին մատրան:

Սոյն հոգեպարար արարողութեանց մեր ծխային ժողովուրդը անմասն չմնալու համար, թաղականութիւնը տրամադրած է յատուկ օրոշարներ՝ փոխադրելու համար ուխտաւոր ժողովուրդը դէպի Պիքֆայայի դպրեմանք, երթ ու դարձը ապահովուած: Օրոշարները ձամբայ պիտի ելլեն կէսօրէ ետք ժամը 5:00ին, Անթիլիասի Սիմիթեան շէնքերուն առջեւէն:

Ուխտաւորներէն կը խնդրուի իրենց տեղերը նախօրօք ապահովել, հետաձայնելով հետեւեալ թիւերուն՝ 04-402260 և 03-781068. առաւելազոյնը մինչեւ Հինգշաբթի, 15 Օգոստոս 2002ի երեկոյեան:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ
ԺՈՒՆԻԷԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՆ
ԵԿԵՂԵՅԻՈՅ

ԿՈՒՇԵՍ ՇԱՐՈՒՄԱԿԵԼ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍՈՒՄԳ Արձանագրուել՝

ՓՕԼԻԿԼՕԹ

ԹԵՔՆԻԲԸԸ ԲՈԼԵՃԻ

Մասնագիտութիւն (T. S., B. A.) գոյգ վկայականներ
● Որակավոր ուսուցչակագծ
● Լիքնագրեան միջազգային ճանաչուած վկայականներ (T. S., B. A.)
● Մատչելի կրթաթոշակ և վճարման դիրքութիւն
● Առաւօտեան և երեկոյեան դասընթացը

POLYGLOT - Տորա: 251320
Տըր և տնօրէն ՊԵՏՐՈՍ ՇԵՍՏԵԱՆ

ԻՆՉ ԿԸՍԵՆ ԿԱՍ ԿԸՆԵՆ ՓՕԼԻԿԼՕԹ ԲՈԼԵՃԻ ԾՐՁԱՆԱԲՐՏԵՐԸ

«...Թիքթիկի և Թուրիզի վկայական ստացայ Փօլիկլօթ Բոլեճի: Այժմ ունիմ իմ սեփական ճամբորդական գրասենեակս...»:
ՆԱԹԱԼԻ ՏԻԱՊ

ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԱԲՏՐԱԼԻՈՅ ԴԵՄՊԱՆԸ

Երէկ Արամ Ա. կաթողիկոս Պիքֆայայի վանքին մէջ ընդունեց Լիբանանի մէջ նոր նշանակուած Աւստրալիոյ դեսպանուհին՝ Սթեֆանի Շուապերին: Հանդիպումը տուելիք քար ծանօթացման բնոյթ ունէր: Վեհափառը ընդհանուր գիծերով Հայաստանի, Ղարաբաղի, Հայ եկեղեցւոյ և մեր սպգային պահանջատիրութեան մասին անհրաժեշտ տեղեկու-

թիւներ փոխանցեց դեսպանուհին: Խօսակցութեան յատուկ նիւթ դարձան Միջին Արեւելքի ներկայ կարգութիւնը և Լիբանանի դիմագրուած մարտահրաւերները: Այդ շրջագիծէն ներս վեհափառը կարեւորութեամբ անդրադարձաւ լիբանանահայութեան դերակատարութեան: Դեսպանուհին, իր կարգին, շեշտեց Լիբանանի իրադատուկ դերը Միջին Արեւելքի

մէջ, անոր ներքին կառոյցին իրադատուկութիւնը և Լիբանան - Աւստրալիա յարաբերութեանց կարեւորութիւնը, նկատի ունենալով լիբանանեան կարեւոր համայնքի մը ներկայութիւնը Աւստրալիոյ մէջ: Այս ժիրէն ներս դեսպանուհին նաեւ անդրադարձաւ Աւստրալիոյ հայ համայնքին, որպէս երկրին կարեւոր փոքրամասնութիւններէն մէկը:

ՔԱՆԻՄԸ ՏՈՂՈՎ

● ՄԱՐՈՆԻՆԵՐՈՒ Նարայիա Պոթրոս Սֆէր պատրիարքը երէկ Տիմանի մէջ ընդունեց Քանաւայի մէջ Լիբանանի հիւպատոս Ռատիկ Ֆարէրը և յայտնեց, որ «հայրենիքին հանդէպ աննկուն հաւատքը մեզ կը ստիպէ մէկտեղել ջանքերը, և կառավարութիւնը պէտք է ստեղծէ պայմաններ, որպէսզի արտերկրի լիբանանցիները նաեւ օժանդակեն հայրենիքի վերականգնումին»:

Կի.» կայաններուն դէմ կառավարութեան կողմէ ուղղուած անբաստանութիւնները: Ինչո՞ւ ընդգծեց, որ պատ տեղեկատուութիւնը իր բոլոր սխալներով նախընտրելի է և ընդունելի, քան՝ տեղեկատուութեան չգոյութիւնը կամ միմիայն իշխանութեան տեղեկատուութեան դրոշմները:


հարցաքննութեան: ● ՊԵՅՐՈՒԹԻ աւագ քննիչ դատախազ Հաբէմ Մատի երէկ յայտնեց, որ 23 Օգոստոսին պիտի սկսի պատկերասփիւռի «Էմ. Թի. Վի.» կայանին դէմ ուղղուած անբաստանութեան քննութեան: ● ՓԱՂԱՆԳԱՒՈՐ Կուսակցութեան փոխ նախագահ Ռաշա Սալամէ երէկ յայտնեց, որ Փաղանգաւոր Կուսակցութիւնը պօրակից է պատուութիւններու պաշտպանութեան ջանքերուն:

● ՄԱՂՈՒԹՈՎ բանող վանքու տեսչայի նախագահ Ապտալիա Համաւտէ երէկ կոչ ուղղեց նշեալ վանքու վարորդներուն՝ կապմակերպելու խաղաղ ցոյց մը, Նահատակաց հրապարակի վրայ, այսօր՝ Երեքշաբթի կէսօրուան ժամերէն մինչեւ վարը՝ Չորեքշաբթի գիշեր, արտապայտելու համար վարորդներուն ապրած ողբերգութիւնը:

● ԵՐԵՍՓՈՒՍՆ Ռաիտ Ինօ երէկ տուած մամուլային մը, որուն ընթացքին մտահոգիչ նկատեց պատկերասփիւռի «Էր. Պի. Սի.» և «Էմ. Թի.

Ան դրա դառնալով Պպպիի մէջ նախկին նախագահ Ամին ժեմալէի դէմ գործադրուած հաւանական «մահափորձին» և Փաղանգաւոր Կուսակցութիւնը այս յանցանքով անբաստանելու իրողութեան, Սալամէ շեշտեց, որ Փաղանգաւոր Կուսակցութիւնը երբեք առնչութիւն չունի այդ հարցով, դիտել տալով, որ այդ անհակացողութիւնը այսքան մեծ քաղաքական աղմուկի կարիք չունի:

The Revolutionary Japanese Air Conditioners



DYNAMIC made in Japan



I like it
Powerful
Ideal
Cool
DYNAMIC

- 9000 - 24000 B.T.U. HEAT PUMP SPLIT SYSTEMS
- EXCEPTIONALLY QUIET OPERATION
- LOW POWER CONSUMPTION, HIGH EFFICIENCY
- FULL LCD DISPLAY WIRELESS REMOTE CONTROLLED
- UNBEATABLE PRICES

GAS G. Ayanian & Sons
Dora, Tel: 255222/3/4/5/6 Cellular: (03) 627728/9
Gemayzeh, Tel: 447000 - 445429, Fax: (01) 265187 - 582357

ԻՆՉ ԿԸ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

Տեղական մամուլը իր 12 Օգոստոսի թիւով լուսարձակի տակ առած է ընդհանրապէս տեղական քաղաքական և ապահովական բեւոյ լուրով պանապան հարցեր, պրէսովէի Պէյրութի քննութեանց արդիւնքներուն հրապարակումը և էլեկտրականութեան առնչութեամբ եղած հարցերը:

Իրենց միջազգային բաժինով թերթերը նաեւ լուսարձակի տակ առած են Լեռնային Ղարաբաղի նախագահական ընտրութիւնները և նախագահ Արկաղի Ղուկասեանի ընտրութեան մեծ հաւանականութիւնը:

«Տիար» գրած է. «Երկրի ապահովութիւնը խախտող դէպքերու շարքը կ'երկարի. Պաթշա գիղին մէջ լարուած 3 ականներ կը քանդեն Ռումիէի բանտին ոստիկաններէն մէկուն բնակարանը. 1 կոն և 2 վիրաւոր»: Ըստ թերթին, դատախազ Ատնան Ատտուն «Էմ. Թի. Վի.»ի հարցով պատասխանեց նախարար Արիտիին և ըսաւ. - դատական իշխանութիւնը ոչ մէկ կողմի դէմ կանխիկ տրամադրուածութիւն ունի:

«Մուսաբապալ» նշած է, թէ էլեկտրականութեան ընկերութեան պաշտօնեաներու ապօրինի գործադուլը պրօսաշրջութեան եղանակը կրնայ խանգարել՝ մթութեան մատնելով Լիբանանը:

Ըստ «Սաֆիր»ի, էլեկտրական մարզի սեփականաշնորհման հարցով ֆրանսական և իտալական ընկերութիւնները կը մրցին:

«Անուար» գրած է, թէ Հիւսէյն Հիւսէյնիի համաձայն, կառավարութիւնը տեղեկատուական մարզի հարցով շուրաբով փձակ ունի և միասնական կեցուածք չունի:

«Լիուս» նշած է. «Ուալիտ ժոմպլաթ կը յայտարարէ, որ Լոս Անճելըսի մարտին համագումարին որոշումները երկրի բաժանման կ'առաջնորդեն»: «Միշէլ Աունի շարժումին դեկլարները ընդհանուր ժողով մը գումարեցին Փարիզի մէջ», գրած է թերթը:

«Պայրաք»ի համաձայն, իւրախելեան օդուծը դարձեալ բոնաբարեց Լիբանանի օդային տարածքը:

Միջազգային իրադարձութիւններուն անդրադառնալով «Տիար» նշած է, թէ Մէլուական Արաբիա կը շեշտէ, որ իր հողերը չեն կրնար օգտագործուիլ Իրաքը հարուածելու համար:

«Անուար» գրած է. «Իրաքի դէմ ամերիկեան յարձակումը հաւանաբար մեկնի Քաթարի մէջ հաստատուելիք խաբիսիներէ»: Ըստ թերթին, պաղեստինցի բանտարկեալ Մարուան Պարոթի կ'ինը Դամասկոս կ'այցելէ և իւրախելեան բանտերու մէջ արգելափակուած պաղեստինցիներուն ի նպաստ արշալի կը սկսի:

«Լիուս» լուսարձակի տակ առած է այն երեւոյթը, որ Արիէլ Շարոն կը քննադատէ Հիւսնի Մուպարաքի կեցուածքները և Եգիպտոսի հետ դիւանագիտական տագնապի մը պատճառ կը դառնայ:

«Սաֆիր»ի համաձայն, ամերիկեան Քոնկրէսը Սեպտեմբերին սկսի պիտի քննէ Սուրիոյ դէմ պատժամիջոցներ որդեգրելու օրէնքի նախագիծը:

«Մուսաբապալ» գրած է, թէ Մէլու Ֆայսալ կը յայտարարէ. Իրաքի դէմ յարձակումի մը պիտի չմասնակցինք, այնքան առեւն որ յստակ փաստեր չկան, թէ Իրաքը անմիջական վտանգ կը հանդիսանայ խաղաղութեան. կը նախընտրենք հարցերը լուծել դիւանագիտական միջոցներով:

Ներքին էջերով թերթերը մանրամասնօրէն անդրադարձած են Ռումիէի մէջ պատահած մահափորձին:

Մշակութային բաժինով թերթերը լուսարձակի տակ առած են պանապան փառատօններ, ձեռնարկներ և հանդիսութիւններ: Այս առնչութեամբ «Սաֆիր» գրած է, թէ Ամալի և Հըպպալլայի միջեւ եղած տարակարծութիւնը արգելք հանդիսացաւ Ժըպալի փառատօնի կալացման:

«Անուար» թերթը հարցալրոյց մը ունեցած է երեսփոխան Մարուան Ֆարէսի հետ, որ ըսած է, թէ ԵՈՒՆԵՍԿՕ-ի ռճիրը կարելի չէ համայնքային հարցի վերածել, որովհետեւ այդ մէկը արդար չէ երկրին և ժողովուրդին համար: Ըստ Մ. Ֆարէսի, համախոհական հանդիպումը պիտի չսահմանափակուի մարտի երեսփոխաններով, այլ պիտի ըլլայ սպգային հանդիպում մը:



ԳՈՐԾԱԾԵՑԷՔ FUEL CARD ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեանց համար հեռաձայնել՝ 01-242556 թիւին:

Ն Ա Մ Ա Կ Ա Ն Ի

Պատուարժան խմբագրող թիւն «Ազդակ» օրաթերթի, Այս քանի մը տողերով ձեր ուշադրութեան կը յանձնենք տեղի եւ վնասակար երեւոյթ մը: Վերջին շաբաթներուն հրատարակի վրայ է ձայներից մը (քասէթ), զոր լոյս ընծայած է մեր գաղտնի մէջ ինքզինք «սիրուած երգիչ» հռչակած երիտասարդ մը, որ այս անգամ ոչ միայն կ'երգէ, այլ իր գրած «բանաստեղծութիւնը» կ'արտասանէ «խոր գզգզմաններով», կարօտով, որովհետեւ իր սիրած աղջիկը հեռացած է:

Յաւախն այն է, որ մեր տխրութեանն ալ յարմար չուկայ ստեղծած են անծանօթ «քերթողին» համար, ու հիմա ձեռք-ձեռք կը խուրի այս քասէթը, մեր մշակոյթին անծանօթ մարդոց կողմէ:

Իր կեանքին մէջ հաւանաբար բանաստեղծութեան գիրք մը չկարդացած այս տղան կը յանգնի մեզի բանաստեղծութիւն արտասանել, երգել թրջաբարոյ իր ոճով: Ան ինքզինք կը նկատէ յաջողիկ ուրիշ անհաճոյ ինքնահաւան երգիչի մը:

Մեր երգերը աղաւաղողները միայն այս նորեկը երգիչները չէրան, այլէ՞ մեր տխրութեանը, որոնք շուկան «տաքցողին» որոշ նպատակներով, ու այս ինքզինքը երգիչներն ալ իրենք գիրքներ քան մը կարծեցին:

Ամէն մարդ ազատ է, ուզածը կ'ընէ, բայց բնաւ իրաւունք չունի հայ մշակոյթը ցեխին մէջ թափելու: Այս «սիրուած երգիչները» թող երգեն, ո՛րք որ կ'ուզեն, բայց քասէթներ չտարածեն եւ նոր սերունդի անգիտակից տարրերը

չխաթարեն, անոնց հաւատացնելով, թէ ա'յս է հայ երգը: Ափսո՛ս, որ քաջալերող հայեր կան նման «քերթուածները» ու անոնց խօսքերուն վրայ յօրինուած ա լա թուրքա եղանակներով վաւառտ ու լպիւրջ երգերը:

Քանի մը օր առաջ Հայաստանի լրատուական աղբիւրները յայտնեցին, թէ Երեւանի Կոմիտասի անուան երաժշտանոցը դիմած են հարիւրաւոր երիտասարդներ՝ ձայնամարդութեան հետեւելու: Ընդունման քննութեան պայմաններէն մէկն ալ «լաւ հայերէն գիտնալ»ն էր: Հարիւրաւոր դիմողներէն եւ մասնակցողներէն ընդունուած են միայն 6 թեկնածու: Արգեօք մեր երգիչները կարողացին կամ լսեցին՝ այս լուրը:

Այս քասէթը եւ անոնց նմանները պէտք է անհետացնել հրապարակներէն: Տխրութեանը ալ պատուիրել, որ ընդառնջ միայն հայալարի խօսքերով եւ հայադրուծ եղանակներով յօրինուած երգերուն եւ զանոնք սպառեն:

Հոս կ'արձանագրենք քանի մը տողերով մեր յիշած ծիծաղելի «բանաստեղծութեան»:

«Գիշերը մօտեցաւ, վախս սկսաւ
Սեւ ու մուր ամպերով երկինքը
արիւն լացաւ

Գոնե տարիք մէկ անգամ ինձ այցելէ
Թող դպչի հագուստդ գերեզմանիս
վրայ

Որ դագաղս յաւեւ օրհնուած մնայ»:

**ՅԱՐԳԱՆՔՆԵՐՈՎ
ԽՈՒՄԲ ՄԸ
ԵՐԵՎԱՆԱՐԳՈՒՅԻՆՆԵՐ ԵՒ
ԵՐԵՎԱՆԱՐԳՆԵՐ**

ՎԱՐԱԳ ԱՌԱՔԵԼԵԱՆ ՄԵԾ ԼԵԶՈՒԱԲԱՆՆՆ ՈՒ ՄԵԾ ՀԱՅՐ

Քանի մը շարժառայ մամուլը գոտեց մահը հայրենի լեզուաբան Վարագ Առաքելեանի, որուն անունը վերջին յիսուն տարիներուն սերտօրէն կապուած է հայ լեզուաբանութեան քիչ մը բոլոր բնագաւառներուն ու մասնաւորաբար ձեւաբանութեան, շարահիւսութեան, ոճաբանութեան, հնչիւնաբանութեան ու բառարանագրութեան հետ, ու իրրեւ այդպիսին՝ ան ուղիղ գծով շարունակուող է գործը հայագիտութեան հսկաներէն Մանուկ Աբեղեանի ու Հրաչեայ Աճառեանի, որոնք ալ աշակերտած է ինք: Կեանքի վերջին քսան տարիներուն ու հակառակ ծերունագարը հասակին՝ Վ. Առաքելեան ունեցաւ հանրային բեղուն գործունէութիւն մը եւս, եւ անոր անունին կապուած են երկու յատկանշական դրուագներ՝ Արամ Մանուկեանի շիրմին վրայ գետեղուած խաչքարը եւ Գարեգին Նժդեհի աճիւններուն փոխադրումը Սիպերիայէն Հայաստան:

Այս յօդուածով Վ. Առաքելեան լեզուաբանը քննարկումի առարկայ պիտի չդրանք, հակառակ անոր իր գործերուն գրեթէ բոլորին մօտէն ծանօթ եմ՝ մէկէ աւելի անգամ կարդացած ըլլալով անոնց բոլորն ալ, ու մասնաւորաբար անոր «Հայերէնի շարահիւսութիւն»ին երկու հատորներուն, որոնք երկար տարիներ բարձր գիրքերու եղած են բառիս իսկական առումով: Այդ քննարկումը, վստահ եմ, մեծ ձեռնհասութեամբ պիտի կատարեն իր պաշտօնակիցներն ու աստիճանակիցները: Ես պիտի պատմեմ միայն քանի մը յիշեր, գործ անձամբ կը պահեմ իրմէ, եւ գործ ինք անձամբ պատմած է ինձի իր գրասենեակին մէջ:

Վ. Առաքելեան ծնած է արդէ՛ Հայաստանի Կոտայք քաղաքին մէջ, 1910ին, ուր ան ապրեցաւ, չհաշուած պարագայական տեղափոխումները, ամբողջ կեանքը, ուր եւ մահացաւ: Հայրենի այս փոքրիկ քաղաքին մէջ ան ունէր իր սեփական անունը՝ Վարագ Երեմիայի Կոնյանի հոգաշերտ մը, զոր մինչեւ մահը անձամբ կը մշակէր ու կը խնամէր՝ անոր բարիքներէն մեծ հաճութիւնով բաժնի հանելով իր այն գործընկերներուն, որոնք քաղաքանակ ըլլալով գրկուած էին նման պերճանքէ:

Կարսի անկումի օրերուն էր, կը պատմէ ան, մեր տունը այնքան մօտ էր վերին հրամանատարութեան կեդրոնատեղիին, որ մեր պատուհանէն յստակ կորէն կը տեսնէի զօր: Նազարէկեանի հսկայ կերպարը, որուն արդէն ծանօթ էի: Ծարունակ հնչող հեռաձայնին ան կը պատասխանէր իր տաղանակի ձայնով՝ անոր միացնելով ձեռքի ու մատներուն անհանգիստ շարժումները: Քիչ ետք փողոցի խողովակներուն, որոնք իմ գլխուտորոնքն էին, կու տայի նոյն հրամանները՝ նոյն շարժումներով, նոյն շեշտով ու հանդիսաւորութեամբ:

Կր յիշէ Արամ Մանուկեանը, Ռոստոմը եւ Ներիշներ: Ցատուկ պատկառանք ունի առաջինին հանդէպ: Անոր կերպարը երբեք չէ մշուշուած յիշողութեանս մէջ, իսկ ձայնը՝ մինչեւ հիմա կը հնչէ ականջիս: Կը պատմէ մեծագոյն յուզումով: Ու այդ ձայնին ալ հաւատարիմ՝ մօտ 60 տարի ետք ան հատուցեց իր պարտքը՝ անոր շիրմին վրայ բարձրացնելով այն գեղեցիկ խաչքարը, որ կը մնայ անշուշտ տակաւին:

Ու ժամանակագրականօրէն ան կը յիշէ Ներիշ «ձայն» մըն ալ, որուն յաճախանքը չի կրնար թօթափել, որ նոյնպէս հնչած է իր ականջին 1947ին, այն նոյն գրասենեակին մէջ, ուր հիմա նստած՝ գինք մտիկ կ'ընեմ:

Տարին, տարին, կը պատմէ ան մտայն դէմքով մը ու փորձելով վերագտնել կողորդին մէջ խեղդուող ձայնին ընդմիջուած ալիքը: Երեւանի բոլոր տղամարդիկը հաւաքեցին ու տարին: Միայն այս ինստիտուտէն 42 հոգի տարին: Առաւօտ մը կ'աշխատէի, երբ այս դռնէն ներս մտաւ ՔԿՊի ծանօթ ծառայողը, ու մատուցող ցոյց կու տայ գրասենեակին դուռը: Մեր նախաձեռնները հանդիպեցան իրարու, եւ անշուշտ լաւ բան չէի ակնկալեր: «Դուն տակաւին հո՞ս ես», հարցուց գարմացած՝ անկուշտ դահիճի իր լիբը շեշտով:

Այս ըսելով՝ ան պահ մը կը շփէ ճակատը, կարծես այդ դառն յուշը իր թանձրացեալ հետքը ձգած ըլլար այնտեղ եւ ուզէր մատնաբերը ջնջել գայն:

Զինք ճանչցայ 1989ի Գեղտեմբերին, երբ, իրրեւ անդամ Համագրայինի մէկ պատուիրակութեան, այլ միութիւններու շարքին Հայաստան հրաւիրուած էինք կապի կոմիտէութեան կողմէ: Վ. Առաքելեան կ'աշխատէր Լեզուի ինստիտուտի մէջ, որ, եթէ յիշողութիւնս չի դաւաճաներ, կը գտնուէր «Անի» պանդոկէն հագիւ քսան քայլ անդին, իսպառնակին ճիշդ անկիւնը: Շատ ընդարձակ հաստատութիւն մըն էր այս, որ ունէր բաւական ընդարձակ բակ մըն ալ: Այս բակը յատկանշական է անով, որ անոր պատերէն ներս ծուրարած կը մնայ հայկական գողտրիկ տաճար մը: Փողոցէն անցնողը ոչ իսկ պահ մը կրնայ կասկածիլ, թէ իրմէ երկու մեթր անդին կը գտնուի այսպիսի տաճար մը: Իր այս ծածուկ դրբին շնորհիւ էր, որ, երբ 50ական թուականներուն գրեթէ ամբողջութեամբ քանդեցին Երեւանի, ու ոչ միայն Երեւանի, եկեղեցիները, այդ փոքրիկ տաճարը, այդ գողտրիկ մատուռը անվթար մնաց:

Ինձի ցոյց տրուածը շատ համեստ գրասենեակ մըն էր: մուտքի դրան ծինն նստած էր այնչեպ տառիկ մը, անոր կից, աւելի ճաւաղուն սեղանի մը շերտ ինքը՝ Վ. Առաքելեանը՝ առիւծի բաշերով, լայնաթիկունք ու պարթեւահասակ, ինչպէս կարելի էր եղաւ հաստատել անոր ոտքի կանցնելովը, շատ գեղեցիկ ու տպաւորիչ տղամարդ մը: Ձեռնուկեցանք: Շատ յուզուած էի, որովհետեւ չէի կրնար հաւատալ, որ «Հայերէնի շարահիւսութիւն»ին հեղինակը կը տեսնէի միտով ու ոսկորով: Զկրցայ ու չփորձեցի ալ այդ պահուն ձեռք

համբուրելու փորձութիւնս զսպել մէջս: Մինչ ինք քիչ մը անակնկալի եկած էր ու ոչինչ կը հասկնար այս բոլորէն:

Ներողամիտ եղէք, ըսի, որոշեր էի առաջին առիթով համարել այն ձեռքը, որ գրած է «Հայերէնի շարահիւսութիւնը»:

Անցան շփոթի առաջին մէկ-երկու րոպէները: Հետո տարեր էի «Առձեռն» բառարանի նոր հրատարակութեան օրինակ մը իբրեւ նուէր:

Այս ի՛նչ շքեղ հրատարակութիւն է, ըսաւ թերթատելով անոր էջերը, որոնք թարմ մեղանի հոտ կ'արձակէին տակաւին, ու ի՛նչ գեղեցիկ զուգարկութիւն: Իմ բոլորովին քաջայուած էր ու գրեթէ անգործածելի:

Կ'ականարկէր «Առձեռն»ի հին հրատարակութեան, որ արդէն 125 տարուան անցեալ ունէր:

Եւ կ'իճկը կամաց-կամաց սկսաւ քակուիլ:

Այս սիրուն տատիկը իմ քարտուղարուհիս է, ըսաւ ժպտելով ու մատնացոյց ընելով գայն: Քաստուտ տարի առաջ, երբ այստեղ եկաւ, մեր լեռններէն իջած մոլորուն ու գեղեցիկ մարալի տեսքը ունէր. մարալի թեթեւ ոտքերով ալ մտաւ այս դռնէն ներս, ու ա՛յդ մտնելն էր: Ա՛լ պէտք է հանգստանայ: Թէ՛ն չեմ գիտեր՝ ո՞վ պիտի փոխարինէ գինք, որովհետեւ ալ բազուկս է:

Իսկ դուք ե՞րբ պիտի հանգստանաք, պ. Առաքելեան, շատ երկար ծառայեցիք:

Օ՛ր, ո՛չ, իմ բանն ուրիշ: Հէ՛նց նոր աւարտեցի ընդհանուր հայերէնի բառարանին Ա. տառը: Այս ըսելով գլխուս վերեւ գտնուող որմնաղարանէն կ'իջեցնէ թղթածրար մը, որ իմ գնահատումով պէտք է գոնէ 1000-1200 էջ ունենայ:

Ներողութիւն, ըսի շփոթած, այս ի՛նչ բառարան է ու ի՛նչ Ա. տառ:

Այս բառարանը պէտք է ունենայ մօտաւորապէս 20 հատոր, պիտի ընդգրկէ հայերէնի ամբողջ բառապաշարը՝ մօտաւորապէս 150,000 միաւոր բնագրային բնորոշ ու սպառիչ օրինակներով:

Այսինքն պիտի գերազանցէ նոր Հայկագեանն ալ: Ո՛չ, կը պատասխանէ անայլալի. Նոր Հայկագեանը կը մնայ անգերազանցելի: Բայց պէտք չէ մոռնալ, որ ան կը վերաբերի միայն դասական հայերէնին: Այս մէկը պիտի ընդգրկէ ընդհանուր հայերէնը՝ իր հին ու նոր բոլոր արտայայտութիւններով:

Աստուած իմ, կը մտածեմ, այսպիսի առասպելական աշխատանք մը ո՞վ, ո՞ր, ե՞րբ եւ ինչպէ՞ս պիտի աւարտէ: Ու կարծես կը կարող մտքերը:

